ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոտայքկոշ ԲԲԸ-ն ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-24/17 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	Կոտայքկոշ	Կոշիկ աշխատանքային կաճաճիտք	-	Կոտայքկոշ ԲԲԸ	Կարճաճիտք կոշիկը /36-46 չափսերի/ բաղկացած է կոշկերեսի երեսամասից, հետնամասից, ճտքերից, լեզվակից, հիմնական ներդիրից, փափուկ եզրակից, ներբանից: Կաշին բնական նակատով, խոշոր եղջերավոր անասունի, սև գույնի, բարձր որակի, մշակված անջրանցիկ ծածկույթով (արգելվում է օգտագործել սպիլոկ կամ խոզի կաշի): Կոշկերեսի և հետնամասի կաշին պետք է լինի 1.8-2.0մմ հաստության, ճտքերը 1.4-1.6մմ հաստությամբ, իսկ լեզվակը՝

						1.1-1.3մմ հաստությամբ արհեստական կաշվից: Կոշիկի վերնամասի բոլոր դետալների միացումներն իրականացվում են զույգ կարերով, իսկ առաջամասը ճիտքին միանում է եռաշերտ կարերով: Կոշիկի ներս հատվածում տեղադրված է սև գույնի ծակոտկեն գործվածք: Քթամասը և կրնկամասը կոշտ, առանց մետաղական կամ կոմպոզիտային ենթաքթամասի: Քթամասը ներսից մշակվում է 1.6 մմ հաստության թերմոպլաստ նյութով, իսկ կրնկամասը՝ ներսից մշակվում է 2.0 մմ հաստության թերմոպլաստ նյութով: Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձով կարակցված, առնվազն 2մմ հաստության բնական հումքից, պադոշից և կոշիկի համար նախատեսված 1.8մմ հաստության ստվարաթղթից, որոնց մեձ դրվում է մետաղական սուպինատոր: Լեզվակի հիմնական կաշվի և աստառի միջնամասը մշակվում է 1.5-2.5մմ հաստության սպունգանման նյութով: Ճտքերը վերնամասում մշակվում են փափուկ եզրակով, որը բաղկացած է ամուր,

					մաշադիմացկուն, ցրտադիմացկուն արհեստական կաշվից և 0.8-1.2մմ հաստության սպունգանման նյութից: Լեզվակը փակ փական: Կոշիկի ճտքի բարձրությունն ետևամասի հատվածից պետք է կազմի 7.5 – 8.5 սմ: Ճտքերը վրա տեղադրված են 4 զույգ մետաղյա կեռիկներով օղագույցներով: Կապումն իրականացվում է 3.5-5 մմ տրամագծով և 150-160 սմ երկարությամբ քուղերով: Արտաքին ներբանը պատրաստված է մաշակայուն, ցրտադիմացկուն ռելիեֆային առաջին կարգի տերմոպլաստից՝ խիստ արտահայտված պահպանաշերտով: Արտաքին ներբանը կոշիկին միանում է սոսնձման եղանակով, բարձր ճնշման տակ: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Փաթեթավորումը ստվաթղթե արկղերով, արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսե մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Մատակարար

					կազմակերպությունը մատակարարումից առաջ պատսխանատու ստորաբաժան համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 5 օրինակից, որից հետո պատվիրատուն մատակարարին տրամադրում է կոշիկի քանակները ըստ չափսերի: Ապրանքը պետք է լինի նոր չօգտագործված: Ապրանքի մատակարարումը և բեռնաթափումը կատարում է մատակարարը իր հաշվին:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ОАО Котайккош в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-24/17 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
2					